# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 11-Ա

*14 մայիսի 2018 թ.*

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Ավագանին որոշում է

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետնյալ հերթականությամբ`

1.2018թ համայնքի բյուջեի կատարողականի հաղորդում մայիսի 14-ի դրությամբ

Զեկ.- Ս. Աբրահամյան

2.2018 թվականի հաստիքացուցակում անասնաբույժի հաստիքի ավելացում և 13.12.2017թ. համայնքի ավագանու թիվ 39-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

3.2017 թ. դեկտեմբերի 13.12.2017թ. համայնքի ավագանու թիվ 38-Ն որոշման հավելվածում ավելացում կատարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

4. Համայնքի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

5.Համայնքում նոր կառուցվող , վերակառուցվող , վերանորոգվող շենքերի և շինությունների տանիքների գունային լուծումների մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

6.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից /ծածկ 0033-0002/ 0.045 հա գույքային միավոր առանձնացնելու և օրենքով սահմանված կարգով օտարելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

7.Պահուստային հողերից / 03-076-0130/ծածկագիրը կրող գյուղ նշանակության0.9հա հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

8. Արարատի մարզի Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրա հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը , ծավալը , պայմանները և իրականացման կարգը հաստատելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

9. Ոսկետափ համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին

Զեկ.- Ս. Աբրահամյան

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Ամեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 12-Ա

14 մայիսի 2018թ.

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ 14.05.2018Թ-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2018թ. բյուջեի եկամուտների կատարողականը 14.05.2018թ. դրությամբ հետնյալ կերպ`

| | Պլան | Փաստացի | Կատարողական % |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 19350.0 | 3398.0 | 17.4 |
| Գույքահարկ | 10943.0 | 5091.0 | 40.2 |
| Հողի վարձավճար | 3450.0 | 409.0 | 11.8 |
| Տեղական տուրք | 1138.0 | 942.0 | 82.5 |
| Տեղական վճար, աղբահանութ. | 4450.0 | 1207.0 | 18.8 |
| Ծնողական վճար | 2000.0 | 906.0 | 30.2 |
| Ընդամենը | 46306.0 | 11953.0 | 25.8 |

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 13-Ն

14 մայիսի 2018թ.

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39-Ն

## ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածով

Ավագանին որոշում է

Ոսկետափ համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 39-Ն որոշման 2018թ –ի հաստիքացուցակի հավելվածի քաղաքացիական աշխատանք մասում ավելացնել տող <<անասնաբույժ -1-80.000 ՀՀ դրամ>> :

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 14-Ն

14 մայիսի 2018թ.

### ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39-Ն

### ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 70 -րդ հոդվածով

Ավագանին որոշում է

Ոսկետափ համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 38-Ն որոշման <<Հայաստանի Հանրապետության համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի , վճարների դրույքաչափերը սահմանելու մասին >> որոշման հավելվածում ավելացնել կետ

12/ Անասնաբույժի ծառայություններից օգտվելու վճար ըստ ժամանակացույցի . փաստացի անասնագլխաքանակի հիման վրա , մեկ միավորի հաշվով 100 դրամ մեկ ամսվա համար

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 15-Ն

*14 մայիսի 2018թ.*

## 2018Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և« Իրավական ակտերի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածով

Ավագանին որոշում է

Կատարել համայնքի 2018թ.-ի բյուջեում հետևյալ փոփոխությունը՝

1.Անասնաբուժի աշխատավարձի համար /անասնաբուժական ծառայության 04.02.01.55 ծրագրի 4111 հոդվածով նախատեսել 600.0հզ դրամ

2.Պահուստային ֆոնդը պակասեցնել 600.0 հզ դրամ անասնաբուժի աշխատավարձի համար:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 16-Ա

---

*14 մայիսի 2018թ.*

### ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ , ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ,ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի թիվ 1275-Ն որոշմամբ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով

Ավագանին որոշում է.

Հաստատել Ոսկետափ համայնքի տանիքների հետևյալ գույները / բնական և արհեստական կղմինդր, մետաղաթիթեղ , պրոֆիլ, պրոֆնաստիլ,այլ/

RGS-234-107-50 RGB-212-166-84

RAL-2010 RAL-1002

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 17-Ա

*14 մայիսի 2018թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ /ԾԱԾԿ 0033-0022/ 0.045 ՀԱ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 43-րդ հոդվածներով ,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005 թվականի թիվ 1408-Ն որոշումը և հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով

Ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն` համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկ 0033-0022/ ծածկագիրը կրող արդյունաբերական ,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.045 հա հողամասը առանձնացնելու` որպես անշարժ գույքի առանձին միավոր :

2. Տալ համաձայնություն վերոնշյալ հողամասը օտարելու օրենքով սահմանված կարգով :

3. Հողամասի օտարման համար մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով :

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Մեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 18_Ա

*14 մայիսի 2018թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԵՐԻՑ ԳՅՈՒՂ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.9 ՀԱ /ԾԱԾԿ 03-076-0130/ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով

**Ավագանին որոշում է**

1.Տալ համաձայնություն ՝Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող պահուստային հողերից գյուղ նշանակության 0.9 հա հողամասը /ծածկ 03-076-1-0130 / ծածկագիրը կրող հողամասը վարձակալությամբ տրամադրել ու:
2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը տրամադրել 25 տարի ժամկետով ,
3.Վարձավճարի գինը տարեկան սահմանել 36000 հհ դրամ :

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 19-Ն

---

*14 մայիսի 2018թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ `ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ` ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով,

Ավագանին որոշում է

Սահմանել Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի `իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը `ծավալը , պայմանները և իրականացման կարգը `համաձայն հավելվածի :

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Ոսկետափ համայնքի ավագանու
14.05.2018թ. թիվ 19-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒՅԱՆ՝ ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1.Սույն կարգով / այսուհետ՝ կարգ/ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը պայմանները ու իրականացման կարգը՝Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները / այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Ոսկետափ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով :

3.Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները :

4.Սույն կարգը տարածվում է Ոսկետափ համայնքի վարչական տարածքում գտնվող

1.ոչ բնակելի նշանակության տարածքների / այսուհետ՝ օբյեկտներ/սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2.առանձին տեղակայված հասարակական ,արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շինությունների և կառույցների /այսուհետ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վար,

3. հանգստի գոտում և ընդհանուր օգտագործման այլ տարածքների օբյեկտների / այսուհետ՝ օբյեկտներ / սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4. խանութների /այսուհետ օբյեկտներ/սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5.Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են

1.անշարժ գունքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,

2.կանաչապատման համար նախատեսված տարածքների , սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3. անհրաժեշտ լուսավորության՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը , նորոգումը, փոխումը և փոխարինումը :

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին, N596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջում :

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները .

1/շենքի ճակատի ներ ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2/տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3.բնական քարե շարվածքով իրականացված շինությունների ճակատների նյութի ,ֆակտուրայի փոփոխություն և ներկում , ինչպես նաև նոր բացվածքների կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Ոսկետափի համայնքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծի համապատասխան համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

10Ոսկետափի համայնքապետարանի համապատասխան մասնագետի կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ , հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները :

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են

1/ խանութների , հասարակակն սննդի կենցաղասպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և ավտոմոբիլային երթևեկությանը,

2./ մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները .

ա. Ապահովված լինեն տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,

բ.ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում :Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել սիզամարգերում ,

ե.ճանապարհների , փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12.Ոսկետափ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրանց հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13.Անշարժ գույքի սեփականատերերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն , այդ թվում արտաքին գովազդի տեղադրում, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

14.Անշարժ գույքի սեփականատերերը կամ տիրապետողը , Կարգի համապատասխան իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն:

15.Այն դեպքում , երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասը,

2) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասը,

3) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասը,

4) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-3-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Աշխատակազմի քարտուղար Կ. Ավդալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՏԱՓ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 20-Ա

---

*14 մայիսի 2018թ.*

## ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով և համայնքի ավագանու կանոնակարգով

**Ավագանին որոշում է**

1.Ստեղծել համայնքի ավագանու մշտական գործող հետևյալ 3 հանձնաժողովները

-ֆինանսատնտեսական ,բյուջետային և ենթակառուցվածքների

-Գիտության,կրթության, մշակույթի և երիտասարդության

-Իրավական, սոցիալական , առողջապահության և բնության պահպանության :

2.Հաստատել մշտական գործող 3 հանձնաժողովների կազմը համաձայն հավելված 1-ին:

Տոնոյան Յուրա կողմ
Հովակիմյան Վարթեր կողմ
Բարսեղյան Գեղամ կողմ
Սեյրանյան Լուսինե կողմ
Հովհաննիսյան Նաիրի կողմ
Հայրապետյան Արկադյա կողմ
Մարտիրոսյան Ալեքսան կողմ
Կարապետյան Արմեն կողմ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ

# ՈՍԿԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆինանսատնտեսական,բյուջետային և ենթակառուցվածքների

1.Տոնոյան Յուրա /հանձնաժողովի նախագահ/

2.Հայրապետյան Արկադյա

3.Մարտիրոսյան Ալեքսան

Գիտության,կրթության, մշակույթի և երիտասարդության

1.Սեյրանյան Լուսինե /հանձնաժողովի նախագահ/

2.Կարապետյան Արմեն

3.Ղևոնդյան Ներսես

Իրավական, սոցիալական , առողջապահության և բնության պահպանության

1.Հովհաննիսյան Նաիրի /հանձնաժողովի նախագահ/

2.Հովակիմյան Վարթեր

3.Բարսեղյան Գեղամ

Ոսկետափի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կ. Ավդալյան